ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LTD "ARMAN-EREM"

ք.Գավառ, Արծվաքար թաղ., հեռ. (093) 19-66-68
г.Гавар. уч. Арцвакар тел., (093) 19-66-68
c.Gavar. si.Artcvacar, tel. (093) 19-66-68

էլ. փոստ. arman-erem@mail.ru

№ 03-15/119

«10» սեպտեմբերի 2015թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝
տիկին Ս. Ղավթյանին

«ԻՋԵՎԱՆ» ՍՊԸ տնօրեն՝
պարոն Հ. Սիմոնյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության նախարարության լիցենզիա № 11945) դիտարկելով « ՀՀ Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի ջրամատակարարման ցանցի վերանորոգում » աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, երաշխավորում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 3048,76 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 1 թերթ:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

«Արման-Երեմ» ՍՊԸ

Հաստատում եմ՝
«10» սեպտեմբերի 2015թ.
Տնօրեն՝

______________ Յու. Ավետիսյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ «ՀՀ Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի ջրամատակարարման ցանցի վերանորոգում» աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի

Պատվիրատու՝ <u>Տավուշի մարզպետարան</u> Նախագծող՝ <u>«ԻՋՆԱԽ» ՍՊԸ</u>

Նախագծման հիմք է ծառայում Սարիգյուղի գյուղապետարանի կողմից տրված թերությունների ակտը ինչպես նաև փաստացի ուսումնասիրության և չափագրության արդյունքները: Հաշվի են առնված նաև պատվիրատուի բոլոր առաջարկները և պահանջները:

Նախագծով նախատեսված է՝

<u>Քանդման աշխատանքներ.</u>

- Խրամողու քանդում 3-րդ կարգի բնահողում 0,5x0,8մ կտրվածքով,

<u>Կառուցման աշխատանքներ.</u>

- Նախատատրաստական շերտի իրականացում տեղի փափուկ բնահողից 100մմ հաստությամբ,
- Պոլիէթիլենային խողովակի տեղադրում d=40x3,7մմ PN16,0 մթն փորձարկումով,
- Խողովակաշարի լվացում վարակազերծումով,
- Ճանապարհների հետ հատման տեղերում պաշտպանիչ պատյաի տեղադրում d=89x3մմ պողպատե խողովակից,
- Խրամուղու հետ լիցք:

Ներկայացված է նախահաշիվ *3048,76* հազ. դրամ գումարով:

Նախահաշվային փաստաթղթերը կազմված են շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա, որը հաստատված է թիվ 05 03.05.2008թ հրամանով ՀՀ Քաղաքաշինության Նախարարության կողմից:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2049,28 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 2900,39: Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 221835 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2015թ. №06 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիմիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է՝

ա - Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից - 1.132

բ - Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից - 1.05

գ - Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից - 1.02

Նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված թերությունները վերացվել են փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով:

*Եզրակացություն:*

« ՀՀ Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի ջրամատակարարման ցանցի վերանորոգում » աշխատանքների նախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է *3048,76* հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գլխավոր ճարտարագետ Մ. Աղդայան

Գլխավոր մասնագետ Ա. Գրիգորյան